ԼՈՒՍԵՖԻ ԴԵՂԸ ԸՆԴՈՒՆՈՂ ԲՈՒԺԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՅՈՒԹԸ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԻ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԳՈՎԱԶԴ:

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

ԴԵՂԸ ԸՆԴՈՒՆՈՂ ԲՈՒԺԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԼՈՒՍԵՖԻ (ԼՈՒՍԵՈԳԼԻՖԼՈԶԻՆ)

թաղանթապատ դեղահատեր 2.5 մգ և 5 մգ

Հուշաթերթիկում նշված նախազգուշացումներն ուղղված են նվազեցնելու որոշակի կողմնակի ազդեցությունների զարգացման ռիսկը:

Հուշաթերթիկը բացատրում է, թե ինչպես ճանաչել կողմնակի ազդեցությունները և ինչ քայլեր ձեռնարկել այդ իրավիճակներում:

Լուսեֆի դեղն օգտագործելուց առաջ ուշադիր կարդացեք ներդիր-թերթիկը՝ ներառված դեղի փաթեթում :

Եթե ունեք հարցեր Ձեր հիվանդության կամ նշանակված բուժման վերաբերյալ, քննարկեք դրանք Ձեր բժշկի հետ:

ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ և ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ՊԱՀԱՆՋՈՂ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ջրազրկում (հեղուկի անբավարար քանակ օրգանիզմում)

Լուսեֆի դեղը կարող է մեծացնել օրգանիզմից հեղուկի արտազատումը մեզի հետ և առաջացնել հետևյալ ախտանիշները.

- բերանի կամ կոկորդի չորություն,
- արտազատվող մեզի ծավալի ավելացում (պոլիուրիա),
- միզարձակման հաճախականության ավելացում (պոլակիուրիա):

Ներքևում նշված դեպքերում ջրազրկման ռիսկը մեծանում է և դուք պետք է զգուշանաք՝

- դուք շատ եք քրտնում (օրինակ՝ ամռանը կամ սպորտով զբաղվելու ժամանակ),
- դուք ունեք տենդ, փորլուծություն կամ փսխում,
- դուք չեք կարողանում բավարար քանակությամբ սնունդ ընդունել
- դուք քիչ ջուր եք խմում (օրինակ՝ ձմռանը),
- արյան գլյուկոզի մակարդակի հսկողությունը կատարվում է ոչ պատշաճ կերպով,
- դուք Լուսեֆի դեղի հետ միաժամանակ ընդունում եք միզամուղներ:

Ջրազրկման հիմնական ախտանիշներն են

- ծարավ, բերանի կամ կոկորդի չորություն
- սրտխառնոցի զգացում
- գլխապտույտի զգացում և այլ նմանատիպ ախտանիշներ:

Ջրազրկում առաջանալու դեպքում դադարեցրեք դեղի ընդունումը և անմիջապես դիմեք բժշկական օգնության:

Խմեք բավարար քանակությամբ հեղուկ՝ ջրազրկումը կանխելու համար: Միանգամից մեծ քանակությամբ խմելու փոխարեն, ավելի լավ է խմել հաճախակի և փոքր չափաբաժիններով, նույնիսկ բերանի կամ կոկորդի չորության բացակայության պարագայում:

Լուսեֆի դեղը ընդունելու ընթացքում մի՛ սահմանափակեք հեղուկի ընդունումը՝ մեզի ծավալի ավելացման կամ միզարձակման քանակի ավելացման վախից ելնելով:

Տարեց հիվանդների համար՝ զգոն եղեք, քանի որ ջրազրկման ախտանիշները, ինչպիսիք են բերանի կամ կոկորդի չորությունը, կարող են դժվար նկատելի լինել:

Եթե հիվանդացել եք և ունեք փորլուծություն, ջերմություն կամ չեք կարող բավարար քանակությամբ սնունդ ընդունել, ապա Ձեզ մոտ կարող է զարգանալ ջրազրկում: Անհապաղ դիմեք Ձեր բժշկին:

Հուշաթերթիկ՝ Լուսեֆի դեղն ընդունող բուժառուների համար

ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ՊԱՀԱՆՋՈՂ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դիաբետիկ կետոացիդոզ (արյան մեջ կետոնային մարմինների քանակի աճ)

Քանի որ Լուսեֆի դեղը արագացնում է ճարպաթթուների նյութափոխանակությունը, արյան մեջ կետոնային մարմինների (ճարպաթթուների քայքայման արգասիքների) քանակը մեծանում է, ինչը կարող է հանգեցնել կետոացիդոզի:

Ի՞նչ է կետոացիդոզը:
Կետոացիդոզը նշանակում է արյան մեջ կետոնային մարմինների քանակի ավելացում, որի դեպքում բարձրանում է արյան թթվայնությունը և ի հայտ են գալիս ֆիզիկական վիճակի փոփոխություններ: Եթե կետոացիդոզը չհայտնաբերվի և զարգանա, ապա այն կարող է հանգեցնել գիտակցության խանգարման:

Լուսեֆի դեղը ընդունելու ընթացքում Դուք պետք է հետևեք Ձեր ֆիզիկական վիճակի հետևյալ փոփոխություններին՝

Կետոացիդոզի հիմնական ախտանիշները.

- մարմնի քաշի արագ կորուստ,
- սրտխառնոց, փսխում,
- ախորժակի նվազում/կորուստ,
- ընդհանուր, թուլություն
- որովայնի ցավ,
- ծարավի ուժեղ զգացում,
- արագ և խորը շնչառություն,
- գիտակցության խանգարում, ապակողմնորոշում,
- անսովոր քնկոտություն կամ հոգնածություն,
- շնչառության մեջ ացետոնի հոտ,
- բերանի մեջ քաղցր կամ մետաղական համ,
- մեզի, քրտինքի անսովոր հոտ:

Նման ախտանիշների ի հայտ գալու դեպքում, դադարեցրեք դեղի ընդունումը և անմիջապես դիմեք բժշկի:

Կետոացիդոզը կարող է առաջանալ հետևյալ իրավիճակներում, ուստի դրսևորեք հատուկ զգուշավորություն՝

- եթե ինսուլինի դեղաչափը նվազեցվել է կամ ինսուլինային բուժումը դադարեցվել է,
- եթե դուք խիստ սահմանափակել եք ածխաջրերի ընդունումը,
- եթե բավականաչափ չեք սնվում,
- եթե Ձեզ մոտ զարգացվել է որևէ վարակ,
- եթե ունեք ջրազրկման ախտանիշներ:

Կանխարգելման համար
Մի՛ սահմանափակեք ածխաջրերի ընդունումը, ընդունեք մեծ քանակությամբ հեղուկ:

Տարբերակ 2, 2026 թվականի ապրիլ

ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ՊԱՀԱՆՋՈՂ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միզուղիների ֆ սեռական օրգանների վարակներ

Քանի որ գլյուկոզը արտազատվում է մեզի հետ, Լուսեֆի դեղով բուժման ընթացքում կարող են զարգանալ միզուղիների և սեռական օրգանների վարակներ: Լուսեֆի դեղի ընդունման ողջ ընթացքում ուշադրություն դարձրեք վարակի ախտանիշներին:

Սեռական օրգանների վարակների հիմնական ախտանիշներն են.

- քոր սեռական օրգաններում,
- այրոցի զգացողություն սեռական օրգաններում,
- Սեռական օրգանների կամ շեքի (սեռական օրգանների և հետանցքի միջև ընկած հատված) ցավ կամ զգայունություն, կարմրություն կամ այտուցվածություն՝ զուգորդված ջերմության կամ ընդհանուր թուլության-հետ: Այս ախտանիշները կարող են լինել հազվադեպ, բայց լուրջ կամ նույնիսկ կյանքին սպառնացող վարակի նշան, որը կոչվում է «շեքի նեկրոտիզացնող ֆասցիիտ կամ Ֆուրնյեի գանգրենա», որը բայբայում է մաշկի տակ գտնվող հյուսվածքները:

Եթե ունեք այս ախտանիշներից որևէ մեկը, անմիջապես դիմեք բժշկի: Եթե կասկածվում է Ֆուրնյեի գանգրենան, ապա դադարեցրեք դեղի ընդունումը:

Միզուղիների հիմնական ախտանիշներն են՝

- ցավ միզելու ժամանակ,
- քոր սեռական օրգաններում,
- միզարձակման ժամանակ միզապարկի թերի դատարկման զգացողություն,
- ցավ, կարմրություն, այտուցվածություն սեռական օրգանների հատվածում:

Նման ախտանիշների ի հայտ գալու դեպքում, անմիջապես խորհրդակցեք բժշկի հետ:
Միզուղիների վարակի սրացման դեպքում, կարող է զարգանալ պիելոնեֆրիտ կամ սեպսիս:

Կանխարգելման համար՝

- Հետևեք միզարձակման կանոնավորությանը և փորձեք չզսպել միզելու ցանկությունը,
- Հետևեք սեռական օրգանների մաքրությանը և պահպանեք ամենօրյա հիգիենան:

Հուշաթերթիկ՝ Լուսեֆի դեղն ընդունող բուժառուների համար

ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ՊԱՀԱՆՋՈՂ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արյան մեջ գլյուկոզի մակարդակի նվազում (հիպոգլիկեմիա)

Հիպոգլիկեմիայի հիմնական ախտանիշները.

- սառը քրտինք,
- ձեռքերի և ոտքերի դող,
- սովի ուժեղ զգացողություն,
- թուլություն

Հիպոգլիկեմիան կարող է առաջանալ հետևյալ դեպքերում.

- սննդի ընդունման ուշացման կամ անբավարար քանակությամբ ընդունման դեպքում,
- մեծ քանակությամբ ալկոհոլ օգտագործելիս,
- ֆիզիկական գերծանրաբեռնվածությունից

Հիպոգլիկեմիայի զարգացման հետևանքով բուժառուն կարող է կորցնել գիտակցությունը:

Ախտանիշների ի հայտ գալու դեպքում, անմիջապես ընդունեք շաքար (ածխաջրերով հարուստ սնունդ) կամ շաքար պարունակող ըմպելիք: Ծանոթագրություն. Եթե դուք Լուսեֆի դեղի հետ համատեղ ընդունում եք α-գլյուկոզիդազի արգելակիչներ (ակարբոզ, վոգլիբոզ, միգլիտոլ և այլն), ապա պետք է ընդունեք գլյուկոզ:

Եթե այս ամենից հետո ախտանիշները շարունակվում են, անմիջապես դիմեք բժշկի :

Դեղերի որոշակի համակցություններ կարող են մեծացնել հիպոգլիկեմիայի ռիսկը: Այլ դեղեր օգտագործելուց առաջ անհրաժեշտ է խորհրդակցել բժշկի հետ:

Եթե հիպոգլիկեմիան առաջանում է մեքենա վարելիս, բարձրության վրա աշխատանք կատարելիս կամ մեխանիզմներ օգտագործելիս, դա կարող է հանգեցնել վթարի/դժբախտ պատահարների: Եղեք զգույշ:

Հուշաթերթիկ՝ Լուսեֆի դեղն ընդունող բուժառուների համար

▼ Դեղը ենթակա է լրացուցիչ մոնիթորինգի, ինչը նպաստում է անվտանգության վերաբերյալ նոր տեղեկատվության արագ բացահայտմանը:
Դուք կարող եք օգնել՝ հաղորդելով դեղի օգտագործման ընթացքում առաջացող ցանկացած կողմնակի ազդեցության մասին (ներառյալ՝ դրա անարդյունավետության դեպքերը):

Կողմնակի ազդեցությունների մասին հաղորդումներ

Լուսեֆիի օգտագործման ընթացքում որևէ կողմնակի ազդեցության ի հայտ գալու դեպքում, խնդրում ենք տեղեկացնել ձեր բժշկին: Դուք կարող եք նաև տեղեկություններ ուղարկել ստորև նշված կոնտակտներին՝

«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ :
0051, Երեւան, Կոմիտասի պող., 49/5
Հեռ.՝ (+374 60) 83-00-73, (+374 10) 23-08-96, (+374 10) 23-16-82
թեժ գիծ (+374 10) 20-05-05, (+374 96) 22-05-05
Էլ. հասցե՝ info@ampra.am, vigilance@pharm.am
http://pharm.am
Դուք կարող եք նաև կողմնակի ազդեցությունների մասին հաղորդել «Սերվիե» ԲԸ-ին՝
125196, ք.Մոսկվա, Լենայա փող., շենք 7, հարկ 7/8/9
Հեռ.՝ +7 (495) 937 07 00
Էլ. հասցե՝ servier.russia@servier.com
Կայքում հետադարձ կապի ձև
www.servier.ru